

ընկերացողներ, յարանուրէն աստուծու հա-
ճոյր զգացած է ընկերացանութիւնն, անյայտ-
բեկ կարողացած է հայ ու անլիբակսն գրա-
կանութեան բոլոր աշխատող զուխ-գործոց-
ները նուստումնասիրած, և նախապէս իր համեստ
չարաայտուող նկարագրին, հակառակ յան-
դուզն ու խիղախ չըլլալուն, մղուած իրեն հա-
մակերիկ եղող գրականութիւնէն, գրած է զան-
ցառ բարոյացուցիչ յօդուածներ, զանոնք հրա-
ձարակելով հանդէսներու մէջ:

Համեստ ու առաքինի կողակից, անմոռէր
ու սիրակամ մայր, ամբողջ արդարասանքով ու
սիրով շարակալուած, իր ասն, իր շրջակայքին
մէջ կ'սենտէ ամբողջ աշխարհը, ամբողջ քի-
զերքը:

ՎԱՐՈՒԹԱՆ

**ԳՐԱԿԱՆ ԲԵԿՈՐՆ Ի
ՊԱՏՄԱԿԱՆ ՍՐԱՄՏՈՒԹԻՒՆՆԵՐ**
ԵՒ ՊԱՏՄԱՍՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

18

Եզովրոս լեզուանի լլլալուն հա-
մար գիրդի տան վերակացուին քառ-
թեան զոհ եղաւ ու վաճառակա ի մը
ծախուեցաւ, այս վաճառականը Ա
սիական քաղաք՝ Երբ շրջելով իր ու-
նեցած բոլոր գերիները ծախեց,
միայն երեք գերի մնացին, առաջինը՝
երգիչ մը, երկրորդը՝ գրագիր մը,
իսկ երրորդը՝ Եզովրոս:

Այս գերիները ծանր գինով ծա-
խելու համար խորհուրդ առին վա-
ճառականին, որ Սամոս կղզին երթայ,
համակերպելով սոյն խորհուրդին յիշ-
եալ կղզին զնաց և առջի երկու գե-
րիներուն աղէկ լաթեր, իսկ եզովրո-
սին քուրձէ հագուստ մը հագցնելով,
զանոնք վաճառանոց հանեց:

Քսանթոս փրկիստփան, որ այն ա-
տեն Սամոս կը բնակէր, թէև երեւի
իմաստասէր մը չէր, բայց շատերը
կրթած և բաւական հարստութիւն
գրեցած ըլլալով, յարգելի և բարեկե-
ցիկ վիճակ մը ունէր:

Յիշեալ փրկիստփան ալ իր աշա-
կերաններով այդ վաճառանոցը գնաց,
և երկու գերիներու քով Եզովրոսին
տնչուրէ վիճակի մէջ գրուելը վաճա-
ռականին հարատեւութեան վերա-
դրելով, գերիներէն երկուքին հարցուց.
— Ո՞ր տեղացի ես:

- Կապաղովկացի եմ:
- Ի՞նչ գիտես:
- Ամէն բան գիտեմ:

Այս պատասխանին վրայ Եզովրոս
տկանները ցոյց տալով բարձրոճայն
ծիծաղեցաւ, ո՛չ Քսանթոս և ո՛չ իր
աշակերտները կրցան այդ պարօրինակ
ծիծաղին պատճառը հասկնալ:

Քսանթոս՝ այս գերիին համար
պահանջուած հազար դահկոտը չա-
փազանց գտնելով, գնաց միւս գերիին
հարցուց.

- Ո՞ր քաղաքէն ես:
- Լիւզացի եմ:
- Ի՞նչ գիտես:
- Ամէն բան գիտեմ:

Եզովրոս՝ այս պատասխանին վը-
րայ դարձեալ սկսաւ մեծածայն խըն-
դալ:

Քսանթոս այս գրողին համար ալ
պահանջուած երեք հազար դահկոտը
չափազանց գտնելով սիրտը յեղացաւ,
ուստի սկսաւ հեռանալ, բայց աշա-
կերտներուն թախտնձանքին վրայ ետ
դարձաւ և Եզովրոսին ալ զանազան
հարցումներ ուղղել յետոյ հետեւեալ
կերպով շարունակեց.

- Ի՞նչ գիտես:
- Բան մը չեմ գիտեր:
- Ի՞նչ ըսել կուզես:
- Քանի որ այս գերիները ըսին
թէ ամեն բան գիտեն, այլևս ինձի
բան մը չմնաց գիտնալու. այս պա-
տասխանին վրայ Քսանթոս և իր ա-
շակերտները հակացան կրկնակի ծի-
ծաղին պատճառը:

- Քսանթոս նորէն հարցուց,
— Կուզե՞ս որ քեզ գնեմ,
- Կուզես քնէ՛, կուզես մի՛ գներ,
այդ գործը բարոյութիւն կամքէ՞դ կա-
խում ունի:
- Եթէ քեզ գնեմ, պիտի ջանա՞ս
փախչելու:
- Եթէ փախչիլ ուզեմ քեզի չեմ
հարցնէր, ուստի պէտք չէ որ զուն
ալ այս մասին ինձի հարցում ուղղես:

**ՄԱՐԿՈՍ Կ. ԲԵՐԻՒՅԱՆ
ԵՍՏՈՒՆ Զ. ԳՐԱՍՏՄԱՅԵԱՆ
ԿՆՏԱՆՈՒԿՆԵՐ**
Կ. Պոլիս, 2 Հոկ. 1920

— Լաւ կը խօսիս, բայց խիստ աշ-
խարհակ ես:

— Փիլիսոփային կը վարէ սը
մարդու խելքին և հոգիին, այսի ոչ
թէ կերպրանքին ու զէմքին:

Այս խօսակցութեան վրայ Քսան-
թոս և աշակերտները վաճառակա-
նին կողմէ պահանջուած վաթիւն
գահեկանը վճարելով եզովրոսը գը-
նեցին:

Քաղեց՝ և. և.

**ՆԻՍՏՐԱՊԱՊԱՀՈՒՆՆԵՐՈՒ
ՊԱՏՄԱՍՏՈՒԹԻՒՆ**

ՕԳՏԱԿԱՐ ԱՌԱՋԱՐԿ ՍԸ

Ծանօթ բժշկուհի և Ա. կարգի
մանկաբարձ Տէփանեան օգտակար ա-
ռաջարկ մը կ'ըրէ մեզի խնդրելով
զայն Ներկայի Կառավարութեան:

Աւերող պիտի ըլլար ծանրանալ
թէ մեր ներկայ դոյութեան պայքա-
րին մէջ, երբ Հանրապետութեան մէջ
ու այլու բունակ մը պարտաւոր ենք
պահել, որքան մեծ դեր մը խաղալու
կոչուած է Հայ Կարմիր Խաչը, և թէ
որքան աւելի անհրաժեշտութիւն մը
նկատ է հիւանդապահան հիւներ և հի-
ւանդապահներ ունենալու կարեւոր
պարագան:

Հ. Կ. Խաչը առանց բժշկի ու
գեղի, հայ բժիշկը առանց հիւանդա-
պահուհիի շատ ծանր կացութեան
մը պիտի մտնուէին:

Ահա այդ կարեւոր թերին լրացնե-
լու ոգիէն մղուած բժշկուհի Տէփանե-
ան առաջարկ մը կ'ընէ հանրութեան
առջև,

Ինք կ'ստանձնէ պատրաստել երեք
ամսուան ժամանակամիջոցի մը մէջ
հիւանդապահուհիներ: Թանձնաու-
կը ըլլայ ոչ ունեւոր թեկնածուներու
օրապահին ապահովիլ, իսկ ունեւոր-
ներէ վարձք ստանալու օգտատ հիւանդ-
ներու յատկացնելու համար:

Նմանապէս յանձնարարութիւն կ'ըն-
տանձնէ ներկայացող առաջին թեկ-
նածու հիւանդապահուհիին իր օգնա-
կանն ընել, զայն մարդիկ յետոյ ար-
ւեստին մէջ:

Ուստի ամեն անոնք որոնք կրփա-
փաքին հիւանդապահութեան արուեստ
տը ուսնիլ, պարտաւոր են զիմել
խմբագրատուն և ստանալ ներկա-
յացման յանձնարարագիր:

Բժշկուհի Տէփանեան ամեն օր կը
գտնուի Իրարի դեղարանը, Ֆրանկաց
թ. Կ. 11-12:

Բժշկուհի Տէփանեան իր քրիտիքի
երկու բժիշկներու աջակցութիւնը և ս-
տպահոված է իր օգտակար ձեռնար-
կին յաջողութեան համար և, մղուած
զուտ օգտաւարական զգացումներէ, կը
փափաքի աշակերտուհիներ պատրաս-
տել, յօգուտ հայրենիքին և յօգուտ
Իզմիրի հասարակութեան:

Այս նպատակը արթնցած է իր մէջ
հայ բանակին օգտակար ըլլալու միակ
մտածուածով:

Հիւանդապահուհի արուեստը այ-
սօր ամենէ օգտակար ստպարէզներէն
մին է, մասնաւոր մեր իրական սեպին
համար, և յոյս ունինք թէ բաւական
թիւով թեկնածուներ պիտի ներկա-
յանան մեզի ստանալու համար յանձ-
նարարագիրները:

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՁԱՅՆԸ

Օր-ներէն արագ-արագ և հասարակա-
ճարեկան բաժնեգրին 700 զըշ.

Ազգային Անցումը

Չոր. Անդրանիկ այսօր առաւօտ
պիտի այցելէ Ա. Կ. Որբանոցը, ուր
գինք արժանաւոր ընդունելու հա-
մար պատշաճ պատրաստութիւններ կը
տեսնուին:

— Տօր. Անդրանիկի հետեւորդ Քար-
թէն Տօր. Պաշար-արթեան երէկ ըն-
կերակցութեամբ Պ. Աւետիս Նազա-
րէթեան ի տեղոյ Հիլլէն մամլոյ ար-
նօրէն Մ. Մ. Ռոտասի այցելելով Չօ-
րապարին կողմէ շնորհակալութիւն
յայտնած է այն համակիր վերաբե-
րումին համար, զոր ցոյց տուած է
տեղոյս Հիլլէն, Ֆրանսական և հըր-
եայ մամլոյ:

— Մուշեղ Ալբալի բանախօսու-
թիւններէն իբրեւ ընթերցանութեան
գիրք ունենալ փափաքուած ըլլալով,
Հոփստիսեան վարժարանի բարձրա-
գոյն կարգին համար, Ն. Ա. Երանցմէ
տասը օրինակ նուերած է այդ կարգի
աշակերտութիւններու: Նմանապէս 60
հատ նուերած է Ա. Կ. Որբանոցին,
չափահաս որբերու յատկացուելու
համար:

— Ուրբանոց իրիկուն Քաղ. ժողո-
վոյ շորս անդամները օրակարգի խըն-
դիրներու վրայ խորհրդակցութիւններ
ունեցած են և զանոնք ուսուցնալիս:

Վ Ե Ր Զ Ի Ն Ժ Ա Մ

ՀԱՅՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի կացութիւնը անորոշ է և Հայկական զօրախումբեր՝ շնորհիւ
հասած նոր ուժերու, յաջողած են գրաւել Օլթին, որ 15 օր առաջ Քէմալիստ-
ներու կողմէ գրաւուած էր: Այսուհանդերձ քէմալական բանակը կը շարունա-
կէ իր յառաջխաղացումը Սև Մոզու երկայնքին վրայ իբր նպատակակէտ ու-
նենալով Պաթումը:

ՎՐԱՆԿԵԼԻ ԲԱՆԱԿԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Չորավար Վրանկէլի բանակը յարձակում կը գործէ կարմիրներու վրայ,
Ալէքսանդրօպոլի հիւսիսակողմը Պօլէզիկ շատ մը գունդեր անձնատուր հ-
ղած են:

Կօրիցաի հողամասին մէջ, Վրանկէլի ձիաւորները Տնիէթէլը անցնելով
կը յառաջանան զէպի հիւսիսային արեւմուտք:

Մախո իր Ուքրանացիներով գրաւեց Քարլովան՝ Բօլղաւաի նահանգին
և Վերին Խոնիէրօպօլի էքզարքիտայի նահանգին մէջ:

Լեհական թերթերը կը ծանուցանեն թէ Բէրլինուրայի և Վրանկէլի պատ-
ուելակներուն միջև տեսակցութիւն մը տեղի ունեցած է:

Վրանկէլի կտավարութեան յայտարարութեան համեմատ, Գօնսթանթէն
չուզեալ 5000 տակառուչափ հուշաք թեքած՝ Սևաստրօլէն ճամբայ ելած է
Մարտիկոյ համար Ասիէ զատ հարաւային Ռուսիոյ կառավարութիւնը 5
միլիոն բուտ գարի և ցորեն կը մթերէ Խրիմի նաւահանգիստներուն մէջ, նը-
մանապէս Ֆրանսա զրկելու համար:

ԷՆՎԵՐ ԵՒ ՔԱՐԼ ՄԱՐԿՍ

Պաքուէն ստնուած տեղեկութիւններու համաձայն, Արեւելքի ժողովը-
րոց հասարակօրոգային վեհաժողովը վերջանալէ ետք, քաղքին կեդրոնական
հրապարակին վրայ Քարլ Մարքսի արձանը կանգնուած է: Էնվեր ներկայ ե-
ղած է հանդէսին և այս առթիւ ճառ մըն ալ խօսած է:

ՊՈԼՇԵՎԻԿ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ

Ռիկաէն կը տեղեկացնեն թէ, Լիթուանական կառավարութիւնը՝ քաղա-
քէն վտարած է՝ Պօլէզիկեան Կարմիր-Խաչի միսիոնը՝ որ Մոսկուայի կառա-
վարութեան և Արեւմուտքի Սօվիէթ շրջանակներու միջև յարաբերութեան մի-
ջոց կ'ըլլար: Խաչարկութեան ժամանակ՝ միսիոնի գրասենեակներուն մէջ զըտ-
նուած են 12 միլիոն Ֆր. ի գերմանական, աւստրիական և ռուսական գրամա-
տուներու արժեքով թերթ:

ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐԸ ԿՐ ՅԱՆՁՆՈՒԻՆ

Մտոյց տեղեկութեանց համեմատ, ամսոյս 4ին ձէտիս Հիլլէն յառաջա-
պահներուն ներկայանալով, Քէմալական վաշտին ոստիկան-զօրաց հրամանա-
տար սպայ մը և 24 զինուոր յանձնուած են իրենց զէնքերով՝ որոնք եկած
էին Քէմալի զէմ քաղաքում և ցրուած Քէօթահիայի գունդէն:

ԲՈՂՈՒՆԱՑԻՔ ՎԻԼՆԱԻ ՎՐԱՑ ԿՐ ՔԱԼԵՆ

Բոլոնիացիք՝ Վիլնայէ 50 քիլոմէթր հեռու են:
Լիթուանիոյ կառավարութիւնը Յօրաբար ըրած է, խնդրելով գեղազոյ-
նեղէն՝ ամէն գնով գիմաղրել արշաւողներուն զէմ:

ՊՈԼՇԵՎԻՔՆԵՐՈՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

Պօլէզիկեան հեռագիր մը կը գրէ.
Կրօմնօի հողամասին մէջ, բուռն կռիւներէ ետք, մեր խումբերը քաչ-
ուեցան Նիէմէնի ալ եզրքը:
Կատարի կռիւէ մը ետք գրաւեցինք Վօլքովիսքը և շատ մը ուրիշ վայ-
րեր՝ այդ քաղաքէն 10 վերտ հեռու Քօպրիի հողամասին մէջ տեղի կուեն-
նան կռիւներ փոխադարձ յաջողութիւններով:
Իրիմի ռազմաճակտին վրայ՝ Մարիուբօլէն 20 վերտ զէպի արեւմուտք
կռիւները կը շարունակուին:

ՄԱՆԻՅԱԿԻ ՄԵՏ ՀՐԴԵՂ

Մանիյէն կը տեղեկացնեն թէ, ծերակոյտի գաւառատուն և փոքրահասակ չէնքերը հրոյ ճարակ կղած են...

ՌՈՒՍՕՒԹՐԻՔԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

«Թայմզ» կը հրատարակէ Պաքոյի Ռուս թրքական նշանաւոր մտղային վրայ իր պոլիտիկական թղթակցին մէջ հետաքրքրաշարժ և երկու հեռագիրը...

Է՛ վէրի և պոլիտիկ Ջոնօվիէյի նախագահութեան աւելցումը և ժողովը՝ առանց արդիւնքի մը յանգելու, իւր աշխատութիւններ վազան սորէն վերջացուցած է արդիւնք զանազան պատուիրակներու հայեցակէտներուն միջև ծագած անհամաձայնութեան:

Այս խզման վրայ սովիթ պատուիրակութիւնը հետեւեալ զուարճալի յայտարարութիւնը հրատարակած է: «Արեւելքի հասարակութեան վեհաժողովը մէջ բան միայն հաստատելու նպատակով է Արեւելքի ամէն բանէ առաջ իրենց «բիւլա» կը սրբին և Սովիթները այս նախաձեռնութիւնը չեն կրնար մարտնչել:

Սոյն վեհաժողովին գլխաւոր կազմակերպիչները Պաքուէ մեկնած են, և սակայն իրենց օրալը և համագումար իրենց վիթխարի ծրագրերուն պարտապարտութեան վրայ:

ՎԻՆԱՅԻ ՄԵՋ ՊՕԼՉԵՎԻԿԵԱՆ ՍԱՐՍԱՓ

Վիլնայի մէջ յանձնարարուած մը հաստատուած է, ուսումնասիրելու համար այդ հոգաձայնի մէջ արող պոլիտիկական վարչութիւնը Գերեզմաններէն հանուած գիտկներու վրայ հիմնուելով: Թանձնարարուած է որ Վիլնայի մէջ պոլիտիկները՝ աւելի քան 1500 անձեր խոստոված են:

ՆԵՐՈՒՄ ԱՆՍՏՈՂՈՒԻ ԱՊՍՏՄԲՆԵՐՈՒՆ

Նախարարական խորհրդին որոշման վրայ, ներքին գործոց և արդարութեան նախարարները պաշտօն ստացան: Անտառային ապստամբներուն ընդհանրական ծրագիր մը պատրաստել:

ՄԱՐԷՇԱԼ ՖՅՇ ԵՒ ԲԷԹԷՆ

Ֆերտինանտ թագաւորը Մարշալ Ֆոշի և Բէթէնի տուած է Ա. կարգի Միլիտար պատիճանը՝ որ Ռուսներու պատերազմական մեծագոյն պատուանշանն է: Մարշալ Ֆոշի Ռուսներու այցելած միջոցին միևնույն աստիճանին արժանացած էր:

ՔԵՄԱԼԻՍՏՆԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԵՆՂԱՄԱՋԱՑՆՈՒԹԻՒՆ

Ստոյգ տեղեկութիւններու համեմատ Մուսթաֆա Քեմալի և իր ընկերներուն միջև անհամաձայնութիւն ծագած է:

800 ՌՈՒՍ ՏՂԱՔ ԻՐԵՆՑ ԾՆՈՂՔԸ ԿԸ ՓՆՏՈՒՆ

Միպերիայէն 800 տղայ բերուած են՝ Ամերիկեան Կարմիր Քառի խնամքով: Ատոնք Պրէսթի մէջ ցամաք հանուելով փոխադրուեցան զէպի Գալանա ուր հիւրընկալուեցան:

Այդ տղանքը, յիշուած մասամբ Մուսկուայէն և Բէթթօքրատէն, 1918ի գարնան իրենց ծնողաց կողմէ ապահովութեան համար զրկուած էին Ուրալեան զանազան վայրեր: Այդ տղոց ողբականը շատ եղբրական եղաւ: Ծնողքներու կողմէ զրկուած գրամը այլևս չէր բաւեր: Օրապահակները կ'իջնէին և ուսուցիչներէն շատերը կը լքէին իրենց պաշտօնատեղիները: Այսու հանդերձ ատոնցմէ մի քանին մնացին՝ այդ դժբաղդներուն մօտ, որոնք կիսամերկ կը թափառէին անտառներու մէջ՝ անխնամ և անօք, սնանկու համար արմատներով:

Ամերիկեան Կարմիր Քառը յաջողեցաւ անոնցմէ մաս մը զրկել Վլատիմիթսթօք:

Այս տղանքներն են որ Սան-Ֆրանչիսկոյի և Բանամիի ճամբով հասան Մուրապա:

ԼԻԴՎԻՆՕՑ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ ՌՈՒՍԻԱ

Լիւվիւնօք՝ որ Գորէնհակէն հասնելով կը վերադառնայ Ռուսիա, արտօնութիւն ստացած է անցնիլ Շուէտէն գոյ կառավարման միայն:

ԳՈՍԹԱՆԹԻՆԱԿԱՆՆԵՐԸ

Էլէֆթէրոս Թիքոսի տեղեկութեանց համաձայն, Գոսթանթինականները մեծ ճիգեր կը վատեն ընտրութիւնները շահելու համար: Թիքոսթօրու իշխանին կիւր 500,000 Փր. տուած է օգնելու համար ընդդիմադիր բրգական տիւն: Եթէ հակառակ այդ ջանքերուն, յետադիմականները ընտրութիւններու վաղորդային հասկան թէ խաղը կը կորսնցնեն, այնուամենայն չպիտի մասնակցին պայքարին, կարենալ զանազան կամար թէ՛ ժողովարդը ազատ չէր թողած իր կարծիքը յայտնելու:

Կը յայտնեն թէ պետութիւնները երբէք արամադիր չեն նկատի առնելու ընդդիմադիրներու բողոքները:

ԻՏԱԼԻԱ ԵՒ ԵՌԿՕ-ՍԱԼԻԱ

Ագրիականի խնդրին կարգադրութեան մասին, Իտալիոյ և Եւրոպ Սալեիոյ միջև բանակցութիւնները պիտի վերսկսին: Հոկտ. ամսուն Հիս. Իտալիոյ քաղաքներէն միոյն մէջ:

ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ

Մ. Տէպիլէօ, Փրանսոյցի նշանաւոր հրատարակագիրը, Թանի մէջ երկար խմբագրականով մը կը խօսի Մ. Վէնիզէլոսի Յունաստանին խաղացած միջազգային դերին վրայ սա վերջին շրջանին մէջ:

Հեղինակը մասնաւորաբար կը ծանրանայ Գաշնակիցներու հասարակաց պայքարին մէջ՝ Հելլէն բանակի բերած մասնակցութեան վրայ: «Այս բանակը՝ կը սէ, չնորհիւ Մ. Վէնիզէլոսի նախաձեռնութեան, արամադրուած է միս միևնույն ճակատով ընդդէմ քեմալական հորդաներու, որոնք՝ եթէ Հելլէն բանակի ողբատալի հարուածին չ'իմաստաւորեն, հեղհետէ խորհրդով՝ ապահովաբար պոլիտիկութեան և համախառնութեան դործիք պիտի ըլլային: Արեւելքի քրիստոնեաներու և աւելի ուշ բոլոր քաղաքակիրթ ազգութիւններու դէմ:»

Հիմնականով Մ. Տէպիլէօ կը սէ թէ Դաշնակիցները, պարտաւոր են օժանդակել Մ. Վէնիզէլոսի և Յունաստանի, գոհացում առլ Հելլէն ազգին բոլոր պահանջումներուն և հակել Նէոյի գաշնակցին գործադրութեան Պուլխարիոյ կողմէ, որ Յունաստանի բրէսքիթին վնասելու համար ամէն տեսակ մեքենայութեանց կը ձեռնարկէ:

ՀԱՅ. ԱՆԿԱՍ. ՓՈԽԱՌՈՒԹԵԱՆ ԱՐՃԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՂԱՏՈՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ ՀԱՆԳՐԱՍՈՐԱՊԷՍ ԱՆՂԻ ԿՈՆԵՆՏԱՅ ԱՅՍ ԿԻՐԱԿԻ ԻՎՄԻՐԻ ԵՒ ԳՈՐԱԵԼԻՈՅԻ ԵԿԵՂԵՑԻՆՆԵՐՈՒՆ ԻՄԵՋ:

ԻՏԱԼԻԱ ԵՒ ԳՅՍԹԱՆԹԻՆ

Իտալական կառավարութիւնը՝ յայտարարած է որ հելլէն նախկին թագաւորին՝ Իտալիոյ մէջ ներկայութիւնը չպիտի արտօնէ:

ՔԻԷԼԻ ԶՐԱՆՑՔԻՆ ՄԻՋԱԿԵՊԸ

Գիտականներու ժողովը Գերման կառավարութեան ծանուցագիր մը տուած է Քիէլի խնդրին մասին, ուր գերմանական իշխանութիւնները՝ Բուլոնիոյ համար ազգամեծութիւն և պաշար բեռացած տանքմալքական նաւ մը զբաւած են: Ծանուցագիրը կը յիշատակէ որ՝ Վերսալի գաշնակցին արամադրութեանց համաձայն Քիէլի ջրանցքին մէջ նաւարկութիւնը բոլորովին ազատ է:

ՎԱՐՁԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԻԱՅ ՄԵՋ

Իշխատանքի նախարարութիւնը, ի նորոյ ծրագիր մը կը ներկայացնէ առաջարկելով քաղաքական խորհրդարանին քով մասնագիտական խորհրդարանի մը կազմութիւնը որ պիտի ունենայ իր մասնագիտական գործադիր ժողովը և պիտի բաղկանալ 150 անդամներէ, որոնք համեմատաբար պիտի ընտրուին գործարանատէրներու և գործաւորներու կողմէ:

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԴԷՄՔ ՍԸ

Մ. Վէնիզէլոս որոշած է Աթէնք հրատարակել Ֆրանսայի նշանաւոր օրոտաբան Մ. Վիտալը: Խնամելու համար Հելլէն թագաւորը: Բայց մինչև մեծ գիտունին գալուստը կը յուսան որ Նօրիս Վեհափառութիւնը առողջանայ:

ՍՈՎԷՏԱԿԱՆ ԸՆԳՂ. ԺՈՂՈՎ

Հէլսինկֆորէն կը տեղեկացնեն թէ, Հէլսինկ կողմէ Սովիթ պետերու մեծ ժողով մը պիտի գումարուի Մոսկուա, Քիէլիին պալատին մէջ:

ԱՒՍՏՐԻԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ

Վիէննայի քաղաքապետութիւնը Իտալական կառավարութեան զրկած է շնորհակալութեան գիր մը Իտալիոյ կողմէ Աւստրիա զրկուած ուսանողներին համար:

ՍԵՐՊԻԱԿԱՆ ՊԱՆԱԹԻ ՄԵՋ ԽՈՒՎՈՒԹԻՒՆՆԵՐ

Ստոյգ ազգիւրէ առնուած տեղեկութիւններու համաձայն, Պանագի և Պանանիտի մէջ՝ սերպիական իշխանութեան դէմ լուրջ ըմբոստութիւններ ծագած են, նման Խրուսթիոյ ապստամբութեան: Սերպ զորամասերու և ըմբոստ գիւղացիներու միջև արեւնայի կռիւներ ծագած են կըսուի:

ԻՏԱԼԻԱ ԵՒ ՍԵՐՊԻԱ

Հոսմէն կ'իմացնեն թէ՛ Իտալո-Սերպիական բանակցութիւնները 15 օրէն պիտի վերսկսին՝ Վիեննայի մէջ:

ԱՆԳԼԻՑ ԳՈՐԾԱԴՈՒՆՆԵՐԸ

Միջին Կալէսի հանքագործներու գործադուլը վերջացած է: Եոյս կը յայտնեն թէ՛ արտադրութեան հետ զուգահեռաբար օրտպանիկներու աստիճանական յաւելման և հիմնական որոշման համար հանքաւերներու կողմէ եղած առաջարկին մասին, հանքագործներու միջև կատարուելիք խորհրդածողովը օգտակար պիտի ըլլայ այնչափ, որ գործաւորներու գոհացուցիչ օրտկան մը ապահովելով հանդերձ, արտադրութեան ընդարձակման ալ պիտի նպաստէ:

ՅՈՒՆԱԿԱՆ ԳԼԽԱՐԿՆԵՐ
Ա. ԱՐԻՆՆՅՈՒ ԵՒ ԸՆԿ.
132 Պրնկոց Եւր 132
ՍՊԱՍԵՑԷՔ
ՔԱՆԻՍԸՕՐԷՆ
Անոնք որ կուզեն նպաստել յունական ճարտարարուեստին թող գրմեն վերոյիշեալ վաճառատուներ:

ՀԱԼԵՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ԻԶՄԻՐԻ ԲԱՐՁՐ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ
ԻԶՄԻՐԻ ՏՐՈՑ ԳԱՆՁՄԱՆ ՍՆՏՈՒԿ
ԱԶԳ
1920 ամբողջ կալուածական տուրքերէ պարտք ունեցող հարկատուներուն կը ծանուցուի որ՝ իրենց ուղղուելիք մասնաւոր ազգարարագրին ըստացման թուականէն սկսեալ ութը օրուան պայմանաւոր միջոցին, նոյն ազգարարագրին մէջ նշանակուած անուակին զիմելով, պարտքերնին վճարեն, հակառակ պարագային իրենց նկատմամբ ուղիական հետապնդում պիտի կատարուի:
Իզմիրի տրոյ սնտուկի տնօրէն Ն. ՐԵՎԵԼԻ

ԱՐԴԻ ԴՊՐՈՑ
ՏՐԻ. ՇՐՁԱՆ
Շէնքի փոփոխութեան պատճառով կը վերաբացուի Հոկտեմբերի ուղիքը նոյն ճիւղ ծրագրով մայրիկի և օտար լեզուներու, ուսմանց ու գիտութեանց նորագոյն մեթոտներով և ազգ. խնամտ գաստիարակութեամբ:
Արձանագրութիւնք՝ Երկուշաբթի Զորքաբթի և Ուրբաթ օրերը՝ աստուան ժամը 9.30-11.30, Բուշէն փողոց թիւ 44, Տիարք Յօզհաննէսեաններու տունը:
Հիմնադիր Տնօրէն ԳԻՈՐԳ ԲԱՐՔՈՂ
ԱԶԳ
ՕՐԱՔԵՐՔ
990 998 Ուշիւրձ - Բ. ՊՈՒԹԸՆ ՄԵ՛

